ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստան, 0025, Երևան, Ալեք Մանուկյան փող., 5 շենք,
Հեռ. (+374)10570830, (+374)10554057 էլ.հասցե hasarakakan.kartsiq@gmail.com

Հասարակության երաժշտական նախասիրությունները և ակնկալիքները Հանրային ռադիոյի երաժշտական ծրագրերից

Երևան 2017

Հետազոտության ընտրանք և մեթոդաբանություն

Հետազոտությունն անցկացվել է ամբողջ Հայաստանի տարածքում բացառապես բարձրագույն կրթություն ունեցողների հետ այն մարդկանց շրջանում, ովքեր ռադիոյով նախընտրում են լսել երաժշտություն: Հետազոտությունը նպատակ է ունեցել պարզելու ռադիոլսողների երաժշտական նախընտրությունները և ռադիո լսելու երեկոյան նախընտրելի ժամերը: Հետազոտության ընտրանքը կազմել է 665 հարցվող: Ընտրանքային համախմբության կազմումը կատարվել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրության ծառայության՝ 2011թ.-ին իրականացրած մարդահամարի՝ ՀՀ վարչատարածքային միավորների առկա չափահաս բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվաքանակի հիման վրա: Հետազոտությանը մասնակցած հարցվողների ժողովրդագրական տվյալները ներկայացված են գծապատկեր 1-ում:





Գծապատկեր 1.

Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ հարցված բարձրագույն կրթություն ունեցողների 70%-ը լսում է ռադիո, որից Հանրային ռադիո է լսում միայն 36%-ը (Գծապատկեր 2):



Գծապատկեր 2.

Ռադիոյով երաժշտություն նախընտրում է լսել հարցված բարձրագույն կրթություն ունեցողների մեծամասնությունը՝ 94%-ը (Գծապատկեր 3):



Գծապատկեր 3.

Այն հարցին, թե ինչ երաժշտություն են նախընտրում լսել, հարցվածների 39%-ը նշել է, որ նախընտրում է լսել հայկական երաժշտություն, 27%-ը՝ ռուսական, իսկ

34%-ը՝ արտասահմանյան (ոչ ռուսական) երաժշտություն. նշենք, որ հարցվողներն հնարավորություն են ունեցել ընտրելու մի քանի տարբերակ: Հարցի գրաֆիկական պատկերը կարելի է տեսնել գծապատկեր 4-ում:



Գծապատկեր 4.

Անդրադառնալով երաժշտական ոճերին՝ նշենք, որ գրեթե հավասար տոկոսային ցուցանիշներով բարձրագույն կրթություն ունեցող հարցվածների շրջանում նշվել են դասական երաժշտությունը՝ 18% և ժողովրդական/ազգագրական երաժշտությունը՝ 17%: Երրորդ տեղում հայկական էստրադան է՝ 15%, ապա ռուսական էստրադան՝ 12%: Արտասահմանյան փոփ երաժշտություն նախընտրում է լսել հարցվածների 11%-ը, իսկ ջազ՝ 9%-ը: Առավել ցածր տոկոսային ցուցանիշներ ունեն ռոք, ռետրո և հիփ-հոփ ոճերը (Գծապատկեր 5):



Գծապատկեր 5.

Հարցվածներին հնարավորություն է տրվել նշելու իրենց կողմից սիրված երգիչների կամ երաժշտական խմբերի անվանումներ, որի արդյունքում հարցվածների 22%-ը նշել է, որ չունի նախընտրած երգիչ կամ երաժշտական խումբ:

Հարցվածների մեկ այլ խումբ առանձնացրել է իր համար նախընտրելի կատարողներ կամ խմբեր. դրանք ներկայացված են ըստ հարցվողների կողմից պատասխանների հաճախականության. Zara Larsson, Ներսիկ Իսպիրյան, Ռուբեն Մաթևոսյան, Շառլ Ազնավուր, Ռազմիկ Ամյան, Ֆլորա Մարտիրոսյան, Ռուբեն Հախվերդյան, Սիրուշո, The Beatles, Scorpions, Արա Գևորգյան, Richard Clyderman, Ռեինկարնացիա, Adele, Григорий Лепс, Արթուր Մեսչյան, Enrique Iglesias, Queen, Հայկո, Andrea Bocelli, София Ротару, Abba, Beyonce':

Ինչ վերաբերում է երեկոյան ռադիո լսելու ժամերին, ապա հարցված ռադիոլսողների ընդամենը 28%-ն է լսում ռադիո երեկոյան 21:00-ից հետո (Գծապատկեր 6):



Գծապատկեր 6.

Երեկոյան 21:00-ից հետո ռադիո լսելու նախընտրելի ժամային հատվածները ներկայացված են գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 7.

Ինչպես երևում է գծապատկերից երեկոյան ռադիո լսելու ամենանախընտրելի ժամը 21:00-22:00-ն ընկած ժամանակահատվածն է՝ 34%, որից հետո ռադիոյի լսելիությունը աստիճանաբար նվազում է՝ հասնելով մինչև 6%-ի 02:01-03:00-ընկած ժամանակահատվածի համար:

Երեկոյան 21:00-ից հետո ռադիոյի լսելիության տվյալները, ըստ քաղաքների և գյուղերի, ներկայացված են գծապատկեր 8-ում:



Գծապատկեր 8.

Ինչպես երևում է գծապատկերից, 21:01-22:00-ն առավել նախընտրելի ժամանակահատված է ռադիոլսողների համար ինչպես Երևանում, այնպես էլ մարզային քաղաքներում և գյուղերում: Գյուղերում 22:01-23:00-ն ընկած ժամանակահատվածը, ի տարբերություն Երևանի և մարզային քաղաքների, ամենալսելի ժամանակահատվածն է. այս ընթացքում ռադիո լսում է հարցված գյուղաբնակների 33%-ը:

Երևանում ռադիոյի լսելիությունը համեմատաբար նվազում է 22:01-23:00-ն ընկած հատվածում (14%), ապա կրկին աճում 23:01-00:00 ընկած հատվածում՝ հասնելով 21%-ի, ապա աստիճանաբար նվազում: